

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԵՐԵՔ ԱԹՈՌՆԵՐԻՆ, ԹԵՄԱԿԱԼ ԲՈԼՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՔՆԵՐԻՆ

Գոհություն մեր Աստուծոյն ամենաբարի, որ մի անգամ ևս շնորհում է մեզ ուրախությունը Փրկչի Իշման Սեղանից՝ բերելու Զեզ մեծ ավետիսը հրաշափառ Հարության Հիսուսի Քրիստոսի:

Այսօր մենք բոլորս ոգեպես կանգնած ենք խաչյալ Հիսուսի դատարկ գերեզմանի առաջ ու լսում ենք արձագանքը հրեշտակների ձայնի, թե՝ «Նա կենդանի է. Նա այստեղ չէ. Նա հարություն է առել»:

Սուրբ Հարության տեսիլքով պայծառացած հոգիներով, «մահը մահվամբ» հաղթված լինելու հավատքով գոտեպինդ, մենք՝ սպասավորներս առաքելական մեր Մայր Եկեղեցու, այս առավոտ ողջունենք Սուրբ Զատիկը և վերանորոգենք մեր ուխտը հավատարիմ մնալու մեր ազգի կավակաց հոգիների շինության առաքելությանը, բաշխելով նրանց բոլորին պատգամները հարուցյալ Փրկչի Սուրբ Ավետարանի:

Նաև աղոթենք, որ Սուրբ Հարության շնորհներով, մեր օրերի խռովահույզ աշխարհի սահմաններից հեռանան թշնամությունները, վերանան պատերազմները, և մարդկության կյանքի վրա ապատ ու պայծառ ճառագայթի լույսը արդարության և իշխի շունչը խաղաղարար:

Զատկական ուրախությամբ հղում ենք Մեր սիրո ողջույնը և օրհնությունը Զերդ Սրբազնությանը, տիրախնամ թեմիդ հոգևոր դասին, վարչական մարմինների անդամներին և համայն Մեր հավատացյալ կավակներին:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի անունով ստացվել են ամենաջերմ և հարգալից զգացմունքներով վեղուն բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ Հայ Եկեղեցու նվիրապետական երեք Աթոռների գահակալներից, արտասահմանի և ներքին բոլոր թեմերի առաջնորդներից, ազգային-եկեղեցական, մշակութային, հայրենակցական, տիկնանց, օրիորդաց և երիտասարդաց զանազան կազմակերպություններից, հայ՝ և օտար պաշտոնական անձնավորություններից:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար: